



րիս, Եղիպտոսէ մինչեւ Սպանիա ու Զուլիցե-  
րիս: Մանթաշեան էր քարվաղի Արքայ, որ  
ծրագրերն էր յղանար, պատերազմի հրա-  
մաններ կ'արձակէր, իսկ անոր կերթ սպայա-  
կոյտն էր, որ յաղթութիւններ կը շահէր:  
Այդ սպայակոյտին ամէնէն կարկառուն գէմքն  
էր Սարուխան: Մինչեւ մահը մեծ Հայուն՝  
Սարուխան գործեց 1894—1911 իբր անոր  
Սպարապետը, աջ բազուկը, եւ այնուհետեւ  
մինչեւ ուստական յեղափոխութիւնը եղաւ  
վարիչ երեք չորս նման ընկերութիւններու:  
Մանթաշեանցի գաղափարին ու գործին ի  
սպաս դրաւ նա անձնուէր վճռականութեամբ  
իւր մտաւոր ու մարմնաւոր ոյժերը, իւր ար-  
տասովոր լեզուագիտութիւնը, գործնական  
եւ ուշիմ գլուխը, պարտաճանաչ հաւատար-  
մութիւնը:

Հայ վաճառականութեան պատմութիւնը  
չէ կարող լռել Մանթաշեանցի գործը առանց  
էական թերութեան. չէ կարող լռել նաեւ  
Սարուխանի՝ անոր լիազօր գործակատարին  
անունը առանց մեղանշելու իրականութեան  
դէմ: (Հմմտ. Ա. Սարուխան, «Աղեքսանդր  
Մանթաշեանց, Մեծ Վաճառականն ու Բարե-  
գործը». Վիեննա 1931, էջ 220:) Որքա՛ն ար-  
դար պիտի ըլլար յորելեան մը այս իմաստով  
ու նպատակով:

Արդար պիտի ըլլար յորելեան մը Սա-  
րուխանի նաեւ ազգային գործունէութեան ի  
պատիւ: Յիրաւի, չկար ժամանակակից մեծ  
ձեռնարկ Եկեղեցւոյ եւ ազգին շուրջ, ուր  
Սարուխան չըլլար մասնակից, չկար հարց  
ազգային ու եկեղեցական, որուն իւր նպատակ  
բերած չըլլար Սարուխան հեղինակութեամբը՝  
որ Մանթաշեանցի լիազօրին յատուկ, եւ  
համարեմբ՝ որ լեզուադէտին ու ընթեր-  
ցասէրին սեպհականութիւնն էր: Կովկասի  
մէջ տասնեակ տարիներով եկեղեցական հա-  
մայնքներու մէջ գործած է: Վարած է գան-  
ձապահի պաշտօն Կովկասեան Բարեգործա-  
կանի, Հրատարակչականի մէջ: Կազմակեր-  
պած է ազգային մեծ հանգանակութիւններ ի  
նպատակ թրքահայ կարօտեալներու եւ գաղ-  
թականներու: Մանթաշեանց հոյակապ բա-  
րեգործութիւնը, որուն վկաներ եղած են հայ  
թոշակաւորներ, գրադէտներ եւ հեղինակ-  
ներ, որուն կոթողներ են ի մէջ այլոց էջ-  
միածնի Մայր Տաճարի նորոգութիւնը եւ  
Վեհարանը — Մանթաշեան բարեգործու-  
թիւնը գործօն գերի կը կոչէր նաեւ զՍարու-  
խան իբր խորհրդատու, միջնորդ, բարեխօս:

Հատորներ կրնար գրուել նաեւ այն մասին թէ  
ինչ կատարած է նա ազգային — եկեղեցա-  
կան հարցերու շուրջ բանակցելով եկեղեցա-  
կան ու քաղաքական իշխանութիւններու հետ  
Տիփլիս ու Պոլիս, Պետերբուրգ ու Էջմիա-  
ծին, ու նոյն իսկ Հոռոմ:

Ահա ուրեմն նոր տիտղոս մը Սարուխա-  
նեան յորելեանի: Եւ սակայն ոչ վաճառա-  
կանը, ոչ ազգային գործիչը կը տօնենք  
այսօր: Հոս է հարուստէսն ու անհաւա-  
տալին:

Վաճառականութեան հրապարակներու  
վրայ յաղթական լիազօրը ձեռք կ'երկարէ  
դէպի գրական մրցանակներ ու պոստիւր:  
Սարուխան վաճառական եւ ազգային գործիչ  
մըն է արդէն արեւոր, որ յետահայեաց ակ-  
նարկով ոչ միայն վաճառականական յաջո-  
ղութիւններ, այլ նաեւ բազմահատոր գրա-  
կանութիւն մը իւրը կը կոչէ գոհունակ ժպի-  
տովը քրտնաթոր մշակին:

Ծնած յԱրդանուջ 1862ին, Վիեննական  
Միթիթարեանց Կ. Պոլսոյ վարժարանին սան,  
աշակերտ Այտրեաններու եւ Յոնթանեաննե-  
րու, 1877ին կը թեւակոխէ կեանքի մէջ դպրո-  
ցական — գրական գաղափարական խան-  
դավառ, բայց գերազանցօրէն գործնական  
գլուխ՝ նա չ'ուզէր հացի կարօտ գրող դառ-  
նալ նման շատերու: Նա գրականութեամբ  
կամ դպրոցով չէ որ պիտի ապահովէ իւր  
ապրուստը, այլ ապրուստի անկախ աղբիւր-  
ներով կը նկատի ապահովել գրական անկախ  
գործունէութիւն: Ուրիշ գրագէտներ վաճա-  
ռականներու մօտ մեկենաս ու բարեգործ կը  
փնտռեն, Սարուխան իւր վրայ կը զուգէր եր-  
կուքն ալ, կը դառնար գրող ու վաճառական:  
Իբրեւ վաճառական կը փարէր նա Մանթա-  
շեանի մեծ գործին: Իբրեւ գրող կը փարէր  
իւր իսկ գաստիարակներուն հիմնած «Հան-  
դէս Ամսօրեայ»ին: Գրական առաջին փոր-  
ձերը Մշակի մէջ կատարելէ ետքը, 1887ին  
կը սկսի աշխատակցիլ Հանդիսի եւ կ'աշխա-  
տակցի ցայսօր իբրեւ անոր ամենահին յօ-  
ղուածագիրը:

Ի՞նչ կրնայ գրել, ի՞նչ պիտի գրէ Սա-  
րուխան, մանաւանդ երբ կը լծուի Մանթա-  
շեան ընկերութեան եւ միայն ազատ ժամերը  
կը նուիրէ գրի: Ի՞նչ է բովանդակութիւնը  
Սարուխանեան գրականութեան:

Ինքն իսկ տուած է իւր գրութիւններու  
ցանկը (Բեկիւս եւ Հայերը, էջ 1—ԺԳ):  
Առաջին ակնարկին կարծես նա զուրկ է

ծրագրէ, գրիչ կը շարժէ առիթէ ներշնչուած:  
1887ին ուսանաց գրականութիւնն է իւր նա-  
խընտրած նիւթը: Պատկանեան, Բաֆֆի,  
Սունդուկեանց, Պոռչեանց, Լէօ, Արծրունի  
եւն կը լեցնեն անոր յօդուածները: — Միա-  
ժամանակ օրուան խնդիրներ կը գրաւեն ազ-  
գային գործիչին ուշը, ու նա կը սկսի նկա-  
րագրել ուսանացոց դպրոցները, ընկերու-  
թիւններն ու մամուլը, կաթողիկոսական ըն-  
տրութիւնը ուսական օրէնքի համաձայն,  
կաթողիկէ Հայոց վիճակը Կովկասի մէջ եւն:  
1905ին հայ երգի վարպետներն են որ կը գրա-  
ղենքն վաճառականութեան մէջ իբրեւ հե-  
ղեցնեն վաճառականութեան մէջ իբրեւ հե-  
ղինակութիւն արդէն ծանօթ Սարուխանը:  
— Կը տեսնէ՞ք, ո՞րքան այլազան նիւթեր:  
Զիւր՝ միամտական կապ մը, կարմիր թելը,  
որ իւր գրութիւնները յորինուածական ամ-  
բողջի վերածէ մէկ գաղափարի շուրջ: Կայ:  
Դա իւր նպատակն է — ծանօթացնել ուս-  
անացը թրքահայուն եւ թրքահայը ուսա-  
նայուն: Դա իւր կեանքն իսկ է — վաճառա-  
կանական — արդիւնաբերական կեանքը:  
Իբրեւ լիազօր վարիչ Մանթաշեան Ըն-  
կերութեան նա ամէն տեղ ոչ լոկ ընկերու-  
թեան շահը կը հետապնդէ, այլ կը փնտռէ  
ամէնուրեք ազգը, ազգին կեանքը, ազգին  
պատմութիւնը: Արթուն ու սուր աչքերով  
կը հետեւի ժամանակակից ամէն երեւոյթի,  
որ ազգին կը հայի: Իւր ճամբորդութիւն-  
ները վաճառականի ճամբորդութիւններ չեն,  
այլ դիտողի, ուսումնասիրողի, շատ կար-  
գացողի ու գրողի:

Նկատեցէ՛ք զինքը Սեւ ծովու վրայ: Ռու-  
սական եղբրը կը քերէ Բաթումէ մինչեւ  
Օդեսա — չգիտեմ իբրեւ զրօսաշրջի՞ կ թէ  
Մանթաշեանի լիազօր: Սակայն գիտեմ որ  
իւր խուզարկու աչքերը ուղղուած չեն լոկ  
չուկային: Իւրաքանչիւր քաղաքի գիւրքն ու  
պատմութիւնը, բնակիչներն ու Հայերը կը  
գրաւեն զինքը: Նա գիտէ թէ Հայը այս կամ  
այն տեղ ի՞նչ թիւ կը ներկայացնէ, ի՞նչ գոր-  
ծով կը գրաղի, ունի՞՞ գաղտնի, եկեղեցի:  
Տո՞վ կը գրաղի — 40 տարի յատա՞ — որ  
Գիտէ մանաւանդ — 40 տարի յատա՞ —  
Հայը իւր լեզուն կը մոռնայ խօսելու համար  
երբեմն աւելի խժարուր լեզուներ: Ազգա-  
տէրին սիրտը կ'արիւնի: Միջոցներ կը խորհի:  
Մէկ միջոց կը գտնէ ազգու. Հայրենակցա-  
կան ուժեղ կազմակերպութիւն մը...: Իսկ  
արդի՞նքն այս ճամբորդութեան. Հատոր մը  
«Հանդէս»ի Ազգ. Մատ. ի «Սեւ ծովու ուս-  
ական եղբրը», 1895:


Եթէ լեռնային օդ կը սիրէք, մտէք Սա-  
րուխանի հետ Կովկասեան լեռանց մէջ:  
Վրացիկաւիտէ մինչեւ Թիֆլիս 200 քմ. ճա-  
նապարհն այդ լեռանց մէջէն կ'երկարի, բար-  
ձրանալով մինչեւ 4000 մ.: Սարուխան ճա-  
նապարհորդութիւնը կը վերածէ տեղագրա-  
կան, լեռնագրական ու ազգագրական դասե-  
րու: Հայն իբր ազգ կը բացակայի թէև այդ  
լեռներէն, բայց ներկայ է նա իւր աւանդու-  
թեամբ եւ դիւցազներգութեամբ: Զկայ աւելի  
գեղեցիկ առաջնորդ Կովկասեան լեռանց մէջ  
քան Տիւրեանի — Յոթելեարին գրական կեղծ-  
անունը — համանուն երկը. Վիեննա 1896:

Մի կարծէք որ Մանթաշեան լիազօրի  
պատահական հանգամանք իբրեւ գաղափար  
տուած է ճամբորդութիւնն ի նպատակ գրա-  
կանութեան գործածելու: Գրականութիւնն  
անոր ներքին պահանջն էր աւելի հին եւ աւելի  
երկարատեւ քան վաճառականութիւնը: Նոյն  
համարեմբ եւ արթնութեամբ հեղինա-  
կուած «Ճորտի դեռագրական եւ ազգագրական  
չեւ Արթիւն» տեղագրական եւ ազգագրական  
ուսումնասիրութիւնը կը պատկանի այնպիսի  
ժամանակի 1889—1890, երբ Մանթաշեան  
Ընկերութիւնն հետո էր իւր տեղորոշութիւնն:  
Մանթաշեան Ընկերութիւնը լուծուեցաւ,  
բայց Սարուխանի մէջ գրական հուրը չչլջաւ:  
Գրագէտը շատ աւելի երկայնակեաց եղաւ  
քան լիազօր վարիչը: Ու այն շրջանին, երբ  
Սարուխան լքեց վաճառականական ասպա-  
րէզը եւ հայրենիքը ու փոխադրուեցաւ Եւրո-  
պա, կը պարտինք երկու նոր հատորներ, Սա-  
րուխանեան գրականութեան փայլուն սկիւր:  
Հայրենիքն բաժնուէլէ ետքը Սարուխան  
երեք տարի կը բնակի Հոլլանդա: Հաւատա-  
րեմ իւր սկզբունքին կը խուզարկէ հոն Հայոց  
անցեալը: Ստանիլով իրարու պատմագէտն  
ու բանասէրը, լեզուագէտն ու ազգագիրը  
կ'ընծայէ մեզ «Հոլլանդան եւ Հայերը ԺԶ.—  
ԺԹ. դարերում», 1926: Կը պարզուին Հայոց  
ԺԶ. դարուն կը յիշուին վաճառականներ  
գորգի, մարգարտի եւ 1478ին «ազգային  
տուն» մը իբրեւ հիւրանոց Հայոց: Շարու-  
նակեալ կապ ու երթիւն կը հաստատուի  
1600էն առկին: Զմիւռնիոյ եւ Նոր Զուղայի  
Հայեր կը հիմնեն 70 տունէ բաղկացած դա-  
ղութ մը Ամստերտամի մէջ, ու կը սկսին  
200 տարի տեւող առեւտրական, մշակու-  
թային, գրական եւ տպագրական փառաւոր  
շրջան մը: Հոն կը հիմնուի առաջին հայ



Երբ ու մտաւոր ծննդավայրերուն: Երբ խառնուրդ կ'ըսեմ, մի հասկնաք՝ խառնաշիւթ, անճահ, անդարդ: Ներդաշնակութիւնն է աւոր լեզունն ընտրող գիծը. սահուն, սիրուն: Ինչ որ լեզուն կը գեղեցկացնէ, զայն ճապարակութենէ կ'ազատէ, ճիւղն ու ջղուտ կը դարձնէ, զայն կ'առնէ Սարուխան երկու դաւառաբարբառներէն ու կը յօրինէ Սարուխանեան գրական լեզուն — լաւագոյն լուծումը առանց պայքարին: Ու նա ուղեց այդ լուծման յանգիլ, քանի որ նպատակն էր ոչ լոկ

կովկասահայուն, եւ ոչ լոկ թրքահայուն, այլ երկուքին ալ ծառայել, երկուքն ալ հասկցուիլ, եւ երկուքն ալ դրդել համոզել՝ զիրար ճանչնալու, հասկնալու, իրարու գործակցելու: Հաշտութիւնը զոր կնքած են Սարուխանի գրչին ներքեւ արեւելեան եւ արեւմտեան հայերէնները, պէտք էր արել կովկասահայուն եւ թրքահայուն, Պոլսոյ եւ Թիֆլիսի մէջ: Լեզուն խորհրդանիշն էր այն դաշտախրականին, որուն նուիրուած էր Սարուխան իւր գրականութեամբ:



**Ի ՄԵԾԱՊԱՅԾԱՌ ԱՌՈՒՐ  
ՅՈՐԵԼԵԱՆ ՀԱՆԴԻՍԻ ԳՐԱԿԱՆ ՎԱՍՏԱԿՈՅՆ  
ՄԵԾԱՊԱՏԻՒ ՏԵԱՌՆ ԱՌԱՔԵԼԻ ՍԱՐՈՒԽԱՆԵԱՆՑ  
ԵՐԳԵ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ», Ի  
ՋՆՈՒՆԿՊՈՒ**

ԽՕՄԲ Հ. Ն. ԱՎԻՆԵԱՆԻ

ԱՌՈՒՑ ԸԶՔԸՆԱՐ ԵՐԳԵԼ Ի ՆԸԻԱԳՍ ԶԱՌՈՒՐՍ ՅԻՇԱՏԱԿ,  
ԹԷ ԻՅԵՆ ԱՂԻՔ ՅԱՅՏՆԵԼՈՅ ԶԸՂԶԻՅ ԿԱՐՈՂ ԵՒ ԱՏԱԿ:  
ՀԱՍՅԵՆ Ի ԹԻԿՈՒՆՍ ԳՈՒՍԱՆԻՔ ԿԸՂԱՐՁԱՅ ԵՒ ՊԱՐՔ ԵԳԵՐԱՅ,  
ՅԱՒԵՐԺԱՀԱՐՍՈՒՆԻՔ ԿՈՂՄԱՆՅԸՆ ԿՈՂԱՅ ՅԸՍՏԱԿ ԱՂԵՐԱՅ,  
ՅՕՐԻՆԵԼ ԳԵՂՕՆՍ ԵՒ ԵՐԳՍ ԴԸՐՈՒՍՏԵԱՅ ՅԱՐԵԱՅՆ ԱՍՊԱՐԷՍ,  
ՀԻՒՍԵԼ Ի ՎԱՐԴԻՅ ՊԸՍԱԿՍ ԲՈՂՈՐԻՅ ՊՍԱԿԵԼ ԶԱՐԷՍ,  
ԶԻ ՄԱՏՁԻ ԸՄԲԻՇ ԱՅՍՕՐ Ի ՀԱՆԿԷՍ, ԵՒ ՓՈՐՁ ԵՒ ԸՆՏԻՐ,  
ԲԱԶԿՕՒ ԿՈՐՈՎԻ ՄԸՏՕՔԸՆ ՀՈՒԺԿՈՒ, ՔԱՁԱՅ Ի ԽԸՆԿԻՐ:  
ՏԵՍԱՔ ՄԵՔ ԸԶՔԸՆ, ՅՈՐԵԼԵԱՐ ԱՐԳՈՅ, ԸՄԲԻՇ ՅԱՄՊԱՐԷՍ,  
ՈՒՐ ԶԱՄԸՍ ՅԻՍՈՒՆ ՀԸՆԶԵՅԵՐ ԿԱՅԹԻՆՍ Ի ՄԵՐ ԿԱՃԱՌԷՍ:  
ԱՅՈՒ ՈՉ ԱՆՅԵՐ ԴՊ ՈՂԻՒՄՊԵԱԿԱՆ ՄԸՐՅԱՆԱՅ ՀԱՆԿԷՍ,  
ԱՅԼ ՎԱՍՏԱԿԻ ԳԸՐԶԻՒ ՀԻՒՍԵՅԻՆ ԶԳԸԼԽՈՎԻՔ ԲԵՁ ՊԸՍԱԿՍ ԱՆՏԵՍ:  
ԹԷՊԷՏ ԵՒ ԶԻՅԵՍ ԿԱՐՕՏ ՊԸՍԱԿԱՅ ԵՒ ՊԱՄՄՈՒՃԱՆԱՅ,  
ԸՆԿ ԱՅՆԶԱՓ ՃԸԳԱՆՅ, ՊԷՍՊԷՍ ՎԱՍՏԱԿՈՅ, ԶՈՐ ԱՆՁՆ ՔՈ ԶԱՆԱՅ,  
ԱՅԼ ԿԱՆ ԵՒ ՄԸՆԱՆ ԱՐԳԱՍԻՔ ԲԸՐՏԱՆՅՊ ՅԻՇԱՏԱԿ ԱՆԱՆՅ,  
ԶՈՐ ԴԱՐՔ ՊԱՄՄԵՍՅԵՆ ԱՐԳԱՐ ԴՐՈՒՍՏԵՕՒ ԱՐԱՆՅ ԵՒ ԿԱՆԱՆՅ:  
ՊԱՐՇԻՆ ՔԵՒ ԿԸՂԱՐՁՔ ԵՒ ՄԱՅՐՆ ՔԱՂԱՔԱՅ ԱՄՈՒՐՆ ԱՐԳԱՆՈՒՁՔ  
ԹՕԹԱՓԵԱԼ ԸԶՍՈՒՔ, ՅԱՄԱՔԵԱԼ ԶԱՐՏՕՍՐ ՈՐՊԷՍ Ի ՅԱՆՈՒՐՁԱ:  
ՔԵՁ ԸՆԾԱՅԱՐԵՐ ՏՓՂԻՍ ԵՒ ԲԱԳՈՒ ԵՒ ԱԶԱՆ ՄԱՍԻՍ,  
ԵՒ ՏՈՒՆՆ ՄԱՆՔԱՇԵԱՆ, ՅՈՐՈՅ Ի ՊԱՐՇԱՆՍ ԵՒ ԴՈՒ ԻՍԿ ԴԱՍԻՍ:  
ԻՍԿ ՅԱՐԿՍ ՄԻԽՈՒՐԱՅ ՔԵՁ ՀԱՐԱԶԱՏԻՒ ՈՉ ԸՆԾԱՅՍ ՊԱՇՏԷ,  
ԱՅԼ ԳՈՒԹ ՀԱՅՐԵՆԻ, ՍԷՐ ՍԵՌՆ ԵՒ ԶԵՐՄԻՆ ՅՈՍԿԻ Ի ՏԱՇՏԷ.  
ԶՕՐԷՆ ԴԱՅԵԿԻ ԱՌ ԴԱՅԵԿՈՐԴԻՆ ԽԱՅՏԱՆ ՄԵՐ ԱՂԻՔ,  
ԶԻ ԶԱՓԱՄԻՔ ԾՈՎՈՒ ԾԸՓԻՆ ԽԱՆԴԱԿԱԹ ԵՒ ՎԷՏ ՎԷՏ ԱՂԻՔ:  
ԼԵՌԵՍՅԷ՛ ԱՐԳԵՕՒ Հ Ա Ն Դ Է Ս Ա Մ Ս Օ Ր Ե Ա Յ Ի Հ Ա Ն Կ Է Ս Տ Օ Ն Ի Ն,  
ՅՈՐԺԱՄ ՄԸՇԱԿԻՆ ԻՐՈՅ ԻՍԿ ԱՅԳԻՈՅՆ ԵՐԱՆՏԻՔ ԶՕՆԻՆ:  
ԱՆԿԱՆ ՍԵՐՄԱՆԻՔ ՍԵՐՄԱՆԱՅԱՆԻՔ, Դ ԵՏՈՒՆ ԱՐԳԱՍԻՍ,  
ԵՒ ԶԻ՛ ԻՍԿ ԲԸՆԱԻ Ի ՀՆԶԵԼ ԶԱՐԳԻՆՍ ԲԸՐՏԱՆՅԸԳ ԿԱՍԻՍ:  
ՏԱՅԵՆ ՔԵՁ ԵՐԿԻՆՔ ԴԱՐՁԱՐՁԱՐՁ ԱՄԱՅ ԹԱԹԱՂՈՒՆ ԶԵՂՈՒՆ,  
ԶԻ ԳՈՐԾԵԼ ՄՏԱԳԻՐ ՄԵՂԸՐ Ի ՓԵԹԱԿՍ ՄԱՐԹԱՍՅԷ ՄԵՂՈՒՆ:  
ՄԻ ՄԸՏՅԷ ԶՔԵԻ ԱՐԵԳԱԿՆ Ի ՄԱՐ, ԶԻ ԼՈՅՍՆ ՏԸԸՆԶԵԱՆ  
ՇՈՂԱՅՅԷ ՅԱՆԿՈՐԴ ԸԶՃԱՆԱՊԱՐՀԱԻՒ ԱՅԺՄ ԵՒ ՄԸՇՏԸՆԶԵԱՆ:

Ի ՎԻՆԵՆԱ, ՅՅ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1937:

**ՀԵՌԱԳԻՐՆԵՐ ԵՒ ՆԱՄԱԿՆԵՐ Ա. ՍԱՐՈՒԽԱՆԻ ՅԻՍՆԱՄԵԱՅ  
ՅՈՐԵԼԵԱՆԻ ԱՌԹԻ**

Bruxelles, le 2 Octobre 1937.

Notre Société félicite vivement Monsieur Saroukhan pour son activité littéraire cinquantenaire et se remémore sa collaboration pour la fondation de la chaire d'Arménologie à l'Université de Bruxelles.

A mis, Institut Oriental.

Roma, 2 Ottobre 1937.

Plaudo cordialmente celebrazione operosita multiforme nobile concittadino cordiali voti benaugurando.

A gagianian Vescovo.

Հոտվմ, 29 Սեպտեմբեր 1937:

Մեծապատիւ եւ Մեծարգոյ  
Պարոն Առաքել Սարուխանեան  
Սիրելի համաշխարհային եւ ազնիւ Բարեկամ  
ի Վիեննա:

Ձեր գործունէութեան բարենշան յիանա-  
մեայ յորեկանը պատեհ առիթ մը կ'ընծայէ  
ինձ արտայայտուիլ Ձեր արդիւնաշատ անձին  
նկատմամբ:

Դուք, մեծարգոյ Պարոն, ոչ թէ բախտի  
եւ շնորհի միջոցաւ է որ մատնանիշ կ'ըլլաք  
յաչս Ձեր բարեկամաց, այլ միայն շնոր-  
հիւ Ձեր բանիմաց եւ իրազէտ գործունէու-  
թեան եւ ճշգրտազ ու հաստատրիմ ծառայու-  
թեան: Դուք համեստ եւ կարկառուն դէմք  
մ'էք ի պատիւ հայ համայնքին, միշտ ուղիղ  
եւ անչահախնդիր: Ձեր ճշմարիտ ազգասիր-  
ութիւնը կը փառաբանեն Ձեր երկասիրու-  
թիւնները. ամէն ժամանակ եւ ամէն ուրեք՝  
հանապազ ազգային կաճատներուն եւ մար-  
դասէր ընկերութեանց անդամակցած էք եւ  
առիթ էք փախցնել ազգային գործոց մէջ  
սատար հանդիսանալու ամէն տեղ եւ յամե-  
նայնի: Ձեր երակներուն մէջ հայ արիւնն  
եռացած է եւ այս յառաջացեալ տարիքի մէջ  
եւս կը մնայ տակաւին:  
Ձեր հայրենի կրօնքին փառած յաւէտ

պատեհ առիթ էք զլացած անոր բարգաւա-  
ճանաց եւ պայծառութեան համար աշխա-  
տիլ: Վկայ են այս արտայայտութեան Ձեր  
քանիցս ի Հոտվմ ճանապարհորդելը եւ Սրբա-  
դան Պապերու աշխարհահռչակ վսեմաշուք  
ծիրանաւորներու հետ, իմա երջանկալիչա-  
տակ Ռամպոլլա եւ Մերրի դէլ Վալի, տես-  
նուելու, արծարծելու հայ կաթողիկէութեան  
հողերը վարչութեան խնդիրը ի Ռուսիա, եւ  
երբ Տերամբ, յաջողութիւն գտաւ եւ սկսաւ  
մեծաքայլ զարգանալ սոյն վարչութիւնը,  
որքան մեծ հրճուանք կը խայտար Ձեր կրօ-  
նասէր եւ ազգասէր սիրտը, որուն ես ինքնին  
վկայ եմ: Ձեմ կրնար մոռնալ Ձեր անձնա-  
զոհ աջակցութիւնը եւ ինձ իսկ գլխովին ի  
կովկաս մինչ Առաքելական Կառավարչի  
տիրոջսիւ Վատիկանէն հաստատուած եւ  
Ռուս պետութենէն ընդունուած կը վարէի  
սոյն պաշտօնը: Քանի անգամ փոխաբային  
եւ չափազանց ի միասին մեր կրօնական եւ ազ-  
գային գործոց բարօրութեան համար սատար  
եւ հովանաւորութիւն խնդրելու:

Ահա այսպիսի վերջիչումներով առցեալ  
կ'ըսեմ. Ձեր յիանալի գործունէութիւնը  
հայութեան եւ ուղղափառութեան հորիզոնի  
վրայ իբր ճաճանաչակց աստղ մը կը փայլի.  
Ձեր ճշմարիտ բարեկամները՝ յորոց կարգին  
եմ եւ ես, սերկեան կը հրճուին եւ կուտ  
սրտիւ կը շնորհաւորեմ Ձեր յորեկանը: Օն  
ուրեմն հաճեցէք ընդունիլ ի դիմաց Ձեր ան-  
կեղծ բարեկամիս, շնորհաւորութիւններն եւ  
կեղծ մաղթանքները. թող շնորհէ Ձեզ Եր-  
ջեմ մաղթանքները. թող շնորհէ Ձեզ Եր-  
կիւնը, որ յամայր ամս Ձեր գործունէու-  
թիւնը շարունակէք եւ օգտակար ըլլաք կրօն-  
քիս եւ Ազգիս՝ ինչպէս մինչեւ հիմայ, յայսմ  
հետէ եւս, որքան կեանք որ շնորհէ Ձեզի  
բարեբար Աստուած, բարեաց պարգեւատուն:  
Ահա այսպիսի սրտաբուխ զգացումներովս  
կը կնքեմ նամակս կրկին մաղթանք, որ  
իրբեւ նորափետուր արծուի նորոզի Ձեր  
մանկութիւնը՝ երկնից զեղուն թաթաղուն  
օրհնութեամբ:

Ձերդ ազօթարար  
Սարգիս Եպիսկոպոս Տէր Արքայապետ  
Տիրոջսաւոր Կոկիսոնի եւ Ձեռնադրիչ հայ  
Ծիսի ի Հոտվմ: